ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 2-ը Պորտուգալիայի Հանրապետության քաղաք Լիսաբոն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

1. Ռուստամ Բադասյան - ՀՀ ՊԵԿ նախագահ

2. Նաիրուհի Ավետիսյան - ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության պետի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Պորտուգալիայի Հանրապետություն, քաղաք Լիսաբոն, 2023թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 2-ը

3. **Հրավիրող կողմը.**

Տնտեսական համագործակցության և զարգազման կազմակերպություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ասիայի նախաձեռնության թվով 6-րդ հանդիպմանը և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի տարեկան համաժողովին մասնակցություն

5. **Քննարկված թեմաները.**

- Ասիայի նախաձեռնության աշխատանքային պլանով կատարված աշխատանքների քննարկում և ամփոփում,
- Ասիայի նախաձեռնության անդամ հանդիսացող երկրների ցանկի ընդլայնմանն ուղղված քայլերի քննարկում,
- Նոր համանախագահի ընտրություն,

- Ըստ հարցման տեղեկությունների փոխանակման ստանդարտների ներդրման նպատակով իրականացված փորձագիտական գնահատման գործընթացների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում՝ ըստ երկրների վիճակագրության ներկայացում,
- Ֆինանսական հաշիվների ավտոմատ փոխանակման ստանդարտների ներդրման առաջընթացի վերաբերյալ զեկույցներ, երկրների հաջողության պատմություններ, վիճակագրություն,
- Անդամ պետությունների հարկային մարմինների տեղեկությունների անվտանգության կառավարման վերաբերյալ զեկույցներ,
- Կրիպտոակտիվների հաշվետվողականության ստանդարտի ներդրմանն ուղղված քայլերը, ճանապարհային քարտեզ, տարբեր երկրների ներկայացուցիչների կողմից զեկույցների ներկայացում, կոչ բոլոր երկրներին հնարավորինս արագ միանալու ստանդարտին,
- Մի շարք դոնոր կազմակերպությունների կողմից վերը նշված թեմաների վերաբերյալ զեկույցներ,
- Գլոբալ ֆորումի կողմից անդամ պետությունների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ զեկույցներ, ինչպես նաև համագործակցության ուղիներ,
- Գլոբալ ֆորումի աշխատանքի տարեկան արդյունքների մասին հայտարարության ընդունում, առաջիկա աշխատանքների սահմանում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ ՊԵԿ նախագահը մի շարք հարցադրումներ է բարձրացրել Ասիայի նախաձեռնության հանդիման ընթացքում, մասնավորապես կարևորելով անդամ պետությունների համապատասխան մարմինների միջև աշխատանքային կապերի սերտացման կարևորությունը, որը թույլ կտա ավելի արագ կազմակերպել տեղեկությունների փոխանակման գործընթացները, ինչպես նաև ստեղծել

աշխատանքային խումբ կրիպտոակտիվներով կատարված գործարքների իրական ծավալը հայտնաբերելու և ստվերից դուրս բերելու նպատակով:

ՊԵԿ նախագահը հանդես է եկել նաև Կրիպտոակտիվների հաշվետվողականության ստանդարտի ներդրմանն ուղղված պանելային քննարկման ժամանակ՝ կարևորելով ստանդարտին հնարավորինս արագ միանալու դեպքում առավելությունները: ՊԵԿ նախագահի կողմից միաժամանակ հարց է բարձրացվել, որ զարգացող երկրների շահերը պետք է ևս հաշվի առնվեն և անկախ գործարքների ծավալներից բոլոր երկրները պետք է հնարավորություն ունենան տեղեկություններ փոխանակելու համար:

ՊԵԿ նախագահը հարցադրում է բարձրացրել նաև օֆշոր երկրներում հաշիվների կամավոր բացահայտման ծրագրերի արդյունավետության վերաբերյալ: Մի շարք երկրներ ներկայացրել են իրենց տեսակետները:

Հանդիպումներ են տեղի ունեցել Գլոբալ ֆորումի քարտուղարության ղեկավարի, կարողությունների զարգացման բաժնի ղեկավարի և այլ փորձագետների հետ: Ոչ պաշտոնական հանդիպում է տեղի ունեցել նաև Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու առաջիկա տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ասիայի նախաձեռնության հանդիպման ընթացքում ՀՀ ՊԵԿ նախագահին ընտրվել է 2 տարով Ասիայի համանախագահ:

Առաջիկա օրերին կմեկնարկի հարկային մարմնի տեղեկությունների անվտանգության կառավարման գնահատման գործընթացը:

Տեղի կունենա գիտելիքի փոխանակման հանդիպումներ՝ օֆշոր երկրներում հաշիվների կամավոր բացահայտման ծրագրերի արդյունավետության հաջող փորձ ունեցած երկրների ներկայացուցիչների հետ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ասիայի տարեկան համագումարը կանցկացվի Հայաստանում, ինչպես նաև նախատեսվում է թվով երկու աշխատանքային հանդիպումների անցկացում Հայաստանում: Առաջիկայում կհաստատվի աշխատանքների իրականացման ճանապարհային քարտեզը: Արդյունքում, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ասիայի նախաձեռնության 2024 թվականի բոլոր օրակարգերի կատարումը կվերապահվի ՀՀ-ին և վարկանիշային առումով լուրջ առաջընթաց է որպես հարկային թափանցիկության և տեղեկությունների փոխանակման միջազգային ստանդարտներ կիրառող երկրի կարգավիճակ ունենալու հարցում

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Ռուստամ Բադասյան

Նաիրուհի Ավետիսյան

06.12.2023թ.